

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԽԱԶԻԿՅԱՆ ԱՆՈՒՇ ՍՈՒՐԵՆԻ

**ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԵԹՈԴԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ՝ ՔԻՄԻԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (քիմիա) մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Լիդա Արշակի Սահակյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մանուկ Աշոտի Մկրտչյան

Քիմիական գիտությունների թեկաժու
Շուշանիկ Շամիրի Դաշյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. սեպտեմբերի 17-ին, ժամը 12⁰⁰-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010 ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ.-ի օգոստոսի 6. -ին:

**Մանկավարժության 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնաժու, դոցենտ՝**



Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը. Ընդհանուր կրթության բարեփոխումների և արդիականացման համատեքստում հատուկ ուշադրություն է դարձվում անձի ձևավորմանն ու զարգացմանը ներկայացվող հասարակության պահանջներին: Այդ տեսանկյունից գերակա է դառնում հետազոտական, նախագծային, ստեղծագործական կարողունակությամբ օժտված հասարակության անդամի ձևավորման մեթոդների, տեխնոլոգիաների, ձևերի մշակումն ու առաջադրումը:

Այսօրվա իրողությունն այն է, որ հանրակրթական դպրոցի գործունեությունը պետք է ուղղված լինի ոչ միայն սովորողների համընդհանուր գիտելիքների յուրացմանը, այլև գործնական, հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացմանը, ինչպես նաև նրանց ինքնուրույնության, ինքնակառավարման, ստեղծագործական նախաձեռնության, անկախության, մրցունակության, շարժունակության որակների ձևավորմանը, որոնք էլ որոշում են կրթության ժամանակակից որակը:

Այս տեսանկյունից սովորողների ուսումնական գործունեության հիմքը կազմող հետազոտական կարողությունների զարգացումը հատկապես արդիական է դառնում հիմնական և ավագ դպրոցների սովորողների համար, որը իր հերթին ենթադրում է ժամանակակից դպրոցի կրթության բովանդակության նորացում, ուսուցման գործընթացի տեխնոլոգիականացում, ուսուցման կազմակերպման նոր մոդելների մշակում:

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դպրոցականների ուսումնահետազոտական գործունեությունը հանրապետության դպրոցներում դեռևս պատշաճ մակարդակի վրա չի գտնվում և պահանջում է հետազոտական կարողությունների զարգացման խնդրի լուծման նոր մեթոդների, տեխնոլոգիաների առաջադրում:

Հետազոտության արդիականությունը գիտական և մեթոդական մակարդակով պայմանավորված է այդ ոլորտում դեռևս առկա հակասություններով:

Բացահայտված հակասությունների հաղթահարման առաջնահերթ ուղիներից մեկը մենք համարում ենք քիմիայի ուսուցման գործընթացում ուսուցման նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մոդելի մշակումն ու գործնական կիրառումը:

Հետազոտության նպատակը քիմիայի դպրոցական դասընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մեթոդական-տեխնոլոգիական մոդելի մշակումն է:

Հետազոտության օբյեկտը հանրակրթական դպրոցում քիմիայի ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան քիմիայի ուսուցման գործընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մեթոդական-տեխնոլոգիական համալիրն է:

Հետազոտության վարկածն այն է, որ քիմիայի ուսուցման գործընթացում սովորողների հետազոտական կարողությունների զարգացումը կլինի արդյունավետ, եթե՝

- ուսումնասիրվեն և վերլուծվեն սովորողների հետազոտական կարողությունների զարգացման տեսական և մեթոդական հիմքերը, որոնց հիման վրա այն դիտարկվի որպես անձի ուսումնական, ստեղծագործական գործունեության կարևորագույն բաղադրիչ,
- բացահատվեն և բնութագրվեն քիմիայի ուսուցման գործընթացում սովորողների հետազոտական կարողությունների էությունը, կառուցակազմը և բովանդակային-կառուցողական առանձնահատկություններն ու սկզբունքները նախագծերի մեթոդի կիրառման պայմաններում,
- քիմիայի ուսուցման գործընթացում սովորողների հետազոտական կարողությունների զարգացումը կազմակերպվի ժամանակակից մանկավարժական կոմպետենտային և գործունային մոտեցումների համատեքստում,
- մշակվի և հանրակրթական դպրոցի քիմիայի ուսուցման գործընթացում ներդրվի նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների արդյունավետ զարգացման մեթոդական-տեխնոլոգիական մոդելը,
- սահմանվեն այն մանկավարժական պայմանները, որոնք կապահովեն մշակված մոդելի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների արդյունավետ զարգացումը:

Հետազոտության նպատակին և առաջադիր վարկածին համապատասխան սահմանվել են հետազոտության **հետևյալ խնդիրները**.

- Ուսումնասիրել և վելուծել սովորողների հետազոտական կարողությունների զարգացման տեսական-մեթոդաբանական և մեթոդական հիմքերը, դրա հիման վրա հետազոտական կարողությունները դիտարկել որպես անձի ուսումնական, ստեղծագործական գործունեության կարևորագույն բաղադրիչ,
- բացահատել և բնութագրել քիմիայի ուսուցման գործընթացում սովորողների հետազոտական կարողությունների էությունը, կառուցակազմը և բովանդակային-կառուցողական առանձնահատկություններն ու սկզբունքները նախագծերի մեթոդի կիրառման պայմաններում,
- բացահատել և բնութագրել նախագծերի մեթոդի էությունը, որոշարկել և հաշվի առնել դրա կիրառման ուսումնական հնարավորություններն ու շարժընթացը հիմնական և ավագ դպրոցների 7-11-րդ դասարաններում,
- ուսումնասիրել քիմիայի ուսուցման գործընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման վրա ազդող գործոնները, ձևերը, մեթոդները, տեխնոլոգիաները և փուլերը՝ ներկայացնելով մեկ ամբողջական համակարգով,
- մշակել, փորձարարությամբ հիմնավորել և հանրակրթական դպրոցի քիմիայի ուսուցման գործընթացում ներդնել նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման արդյունավետությունը ապահովող մեթոդական-տեխնոլոգիական մոդելը,
- սահմանել այն մանկավարժական պայմանները, որոնք կապահովեն մշակված մոդելի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների արդյունավետ զարգացումը:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել սովորողների ուսումնա-ծանաչողական, հետազոտական, նախագծային գործունեության և հետազոտական կարողությունների զարգացման վերաբերյալ տեսական-հայեցակարգային մոտեցումներն ու հետազոտությունները (Վ.Վ.Դավիդով, Լ.Վ. Զանկով, Լ.Ա.Դրոյանովա, Ա.Ա.Կորոլկովա, Լ.Ա. Կազանցևա, Տ.Ա.Կամիշինկովա, Դ.Վ.Կոշելյովա, Ի.Ա. Կովալենկո, Յա.Վ. Կրիվենկո, Լ.Վ. Զանկով, Ի.Ա.Զիմնյայա, Գ.Վ.Մակոտրովա, Ա.Մ. Մատյուշկին, Ն.Ա. Մենչինսկի, Վ.Ն.Լիտովչենկո, Վ.Ի. Անդրեև, Մ.Պ. Արսենովա, Վ.Պ. Բուդարկևիչ, Ա.Ա.Բոբրով, Ի.Ս.Յակիմանսկայա, Ա.Ն.Պոդյակով, Ա.Ի.Սավենկով, Պ.Վ.Սերեդենկով, Ա.Վ.Լեոնտովիչ, Ա.Գ. Իոդկո, Ե.Վ.Տիտով, Օ.Ի.Միտորոշ, Տ.Վ.Նեֆեդովա, Ե.Ա.Միլերյան, Լ.Ա.Սահակյան, Լ.Թ.Ասատրյան, Լ.Հ. Նազարյան, Լ.Ա. Իսկոյան և այլք):

Հետազոտության մեթոդները.

Տեսական՝ հետազոտության խնդիրների վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, մեթոդական գրականության ուսումնասիրություն, ստացած տեղեկատվության վերլուծություն, համադրում, համեմատություն, ընդհանրացում, մոդելավորում, քիմիայի դասավանդման գործընթացում ուսումնական հետազոտական նախագծերի իրականացման մեթոդական հիմքերի մշակում:

Փորձարարական՝ մանկավարժական դիտում, բանավեճ, զրույց, սոցիալացում, անկետավորում, մանկավարժական փորձարարություն՝ արձանագրող, ձևավորող, ամփոփիչ փուլերով, ստացված փորձարարական տվյալների մաթեմատիկական մշակման և վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության բազա են հանդիսացել Երևանի թիվ 118, 155, 168 հանրակրթական դպրոցները:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով.

Առաջին փուլում (2017-2018թթ.) ուսումնասիրվել ու տեսական վերլուծության է ենթարկվել հետազոտության հիմնահարցի վերաբերյալ փիլիսոփայական, մեթոդական, հոգեբանամանկավարժական գրականությունը: Այս փուլն առնչվել է առաջադիր հիմնախնդրի տեսական հիմնավորման, նրա արդի վիճակի գնահատման հետ: Նշված ժամանակահատվածում բացահայտվել են քիմիայի ուսուցման գործընթացում սովորողների հետազոտական, նախագծային գործունեության և հետազոտական կարողությունների զարգացման վերաբերյալ տեսական-հայեցակարգային մոտեցումներն ու հետազոտությունները: Սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները:

Երկրորդ փուլում (2019-2020թթ.) բացահատվել և բնութագրվել են քիմիայի ուսուցման գործընթացում սովորողների հետազոտական կարողությունների էությունը, կառուցակազմը, նաև բովանդակային-կառուցողական առանձնահատկությունները նախագծերի մեթոդի կիրառման պայմաններում: Մշակվել է փորձարարական աշխատանքների մեթոդիկան, սովորողների ուսումնա-հետազոտական, նախագծային գործունեության կազմակերպման և հետազոտական կարողությունների զարգացման մոդելը, ձևակերպվել են այդ մոդելի արդյունավետ գործարկման մանկավարժական պայմանները: Մշակվել է փորձարարության ձևավորող փուլի մեթոդիկան և իրականացվել է սովորողների հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված փորձարարական աշխատանքները:

Երրորդ փուլում (2021-2022թթ.) ավարտվել են նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված փորձարարական աշխատանքները, վերլուծվել են ստուգողական և փորձարարական փուլերի արդյունքները: Համակարգվել, ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության արդյունքները, շարադրվել և ձևավորվել է ատենախոսությունը:

Հետազոտության գիտական նորույթը.

- **Ելնելով մեր հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներից, նոր մոտեցում է ցուցաբերվել «սովորողների հետազոտական կարողությունների» հասկացության բնութագրմանը:**
- Մեր կողմից առանձնացվել և բնութագրվել են հանրակրթական դպրոցի քիմիայի դասընթացում սովորողների հետազոտական կարողությունների զարգացման միմյանց տրամաբանական հաջորդականություն կազմող փուլերը:
- Բացահայտվել և հիմնավորվել է ուսումնահետազոտական նախագծերի դերը հանրակրթական դպրոցի քիմիայի ուսուցման գործընթացում, բնութագրվել են սովորողների հետազոտական կարողությունների էությունը, կառուցվածքային բաղադրիչները և բովանդակային առանձնահատկությունները նախագծերի մեթոդի կիրառման պայմաններում:
- Փորձարկվող դպրոցների քիմիայի ուսուցման գործընթացում մշակվել և փորձարկվել են ուսումնական նախագծեր, հետազոտական առաջադրանքներ, նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մեթոդական-տեխնոլոգիական մոդելը, որն իր մեջ ներառում է սովորողների հետազոտական կարողությունների զարգացման նպատակը, խնդիրները, առանձնահատկությունները և սկզբունքները, ժամանակակից մանկավարժական մոտեցումները, ձևերը, ուսուցման գործընթացը ակտիվացնող նախագծերի մեթոդը՝ փոխներգործուն այլ մեթոդների զուգորդմամբ, նախագծային, համագործակցային, քննադատական մտածողության զարգացման, կոլեկտիվ, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները և մանկավարժական պայմանները:
- Մշակվել և հանրակրթական դպրոցում քիմիայի ուսուցման գործընթացում ներդրվել է նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մեթոդական-տեխնոլոգիական մոդելը:
- Սահմանվել են մանկավարժական այն պայմանները, որոնց ապահովմամբ արդյունավետ է դառնում քիմիա առարկայի ուսուցման գործընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացումը:

Հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է քիմիա առարկայի ուսուցման գործընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման արդյունավետության ապահովման հարցերի վերաբերյալ նորովի մոտեցումներով, նախագծային տեխնոլոգիայի, ուսումնական նախագծերի իրականացման վրա հիմնված դասագործընթացի մոդելավորմամբ, որը կհարստացնի քիմիայի դասավանդման մեթոդիկան տեսական նոր դրույթներով: Այն կարող է հիմք հանդիսանալ հանրակրթական դպրոցների քիմիայի ուսուցիչների վերապատրաստման և նրանց մեթոդական պատրաստության կատարելագործման համար:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ՝ մեր կողմից մշակված և քիմիայի ուսուցման գործընթացում փորձարկված նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մեթոդական-տեխնոլոգիական մոդելը, գիտամեթոդական հանձնարարականները կարող են նպաստել հանրակրթական դպրոցում քիմիայի դասավանդման գործընթացի արդիականացմանն ու նորացմանը: Ինչպես նաև այն կարող է օգտակար լինել քիմիայի ուսուցչին հստակեցնելու դասի կառուցման տրամաբանությունը, դրա նպատակային, բովանդակային, ընթացակարգային, տեխնոլոգիական բաղադրիչները:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները

1. Հանրակրթական դպրոցում քիմիայի ուսուցման գործընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման ժամանակակից մեթոդական-տեխնոլոգիական մոդելը, որը ներառում է՝

- Առարկայի չափորոշային բաղադրիչը (բովանդակությունը, նպատակը, խնդիրները, սկզբունքները):
- Կազմակերպչական-մեթոդական բաղադրիչը:
- Գործնական բաղադրիչը (ուսուցման մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցները):
- Արդյունքային-ռեֆլեքսիվ բաղադրիչը:

2. Մանկավարժական պայմանների համալիրը, որը ներառում է .

- քիմիայի դասընթացում սովորողների նախագծային գործունեության կազմակերպման տրամաբանությունը,
- սովորողների կողմից ուսումնական նախագծերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային, հետազոտական միջավայրի և հնարավորությունների ապահովումը,
- տեղեկատվության փոխանցման միջոցների և ձևերի ապահովումը,
- ժամանակակից մանկավարժական և թվային տեխնոլոգիաների միաժամանակյա և համահունչ կիրառումը:

3. Քիմիայի ուսուցման գործընթացում նախագծերի մեթոդի և փոխներգործուն այլ մեթոդների, տեխնոլոգիաների համաժամանակյա կիրառումը, ուսումնահետազոտական նախագծերի իրականացումը նպաստում են սովորողների հետազոտական, նախագծային կարողությունների զարգացմանը, տեխնոլոգիական հմտությունների ձևավորմանը՝ ապահովելով գիտելիքների յուրացման, ուսումնական այլ կարողունակությունների զարգացման արդյունավետությունը:

4. Առանձնացված և բնութագրված է ընդհանուր հետազոտական կարողությունների կառուցվածքը, որը ներառում է՝ ընդհանուր հետազոտական և ճանաչողական իրավիճակային պայմանների վերլուծման, վարկածներ առաջադրելու և հիմնավորելու, աշխատանքը պլանավորելու, նախագիծը իրականացնելու, արդյունքները գնահատելու կարողությունները, իրենց հերթին ապահովում են հետազոտության թեմայի իրականացումը:

5. Քիմիայի դասընթացում ուսուցման նախագծերի մեթոդի կիրառումը, դասագործընթացին մասնակից յուրաքանչյուր սովորողի այդ գործընթացի օբյեկտից վեր է ածում լիիրավ սուբյեկտի՝ խթանելով նրա հետազոտական և ճանաչողական ակտիվությունը, զարգացնում նախագծային,, ստեղծագործական, տրամաբանական և քննադատական մտածողությունը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովված է աշխատանքի գիտական ապարատով և մեթոդաբանությամբ, հանրակրթական դպրոցներում քիմիայի ուսուցման փորձի և համակողմանի վերլուծությունների արդյունքով, փորձարարական աշխատանքներում սովորողների, դասավանդող ուսուցիչների ակտիվ ներկայացուցչությամբ և ներգրավվածությամբ, գիտափորձի տևական բնույթով և ատենախոսի անձնական մասնակցությամբ ու ներդրումով:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի քիմիայի, կենսաբանության և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնում, Երևանի թիվ 118, 155, 168 դպրոցներում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հետազոտողի կողմից հրատարակված յոթ հոդվածներում, ներկայացվել են գիտագործնական գիտաժողովներին և մեթոդական սեմինարներին:

Աշխատանքի ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, հավելվածներից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 143էջ, պարունակում է 10 աղյուսակ, 4 գծապատկեր, 9 տրամագիր, 4 նկար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ «Նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման տեսական-մեթոդաբանական հիմքերը» խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Սովորողների հետազոտական կարողությունների զարգացումը որպես հոգեբանամանկավարժական հիմնախնդիր» դիտարկվել են հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփաների, մանկավարժների, հոգեբանների, մեթոդիստների տեսական մոտեցումները և

հայեցակարգային դրույթները, նշվում է որ գիտական գրականությունում «հետազոտական կարողություններ» հասկացությունը ունի տարբեր բնութագրումներ: Ներկայացված են այդ բնութագրումները, որոնցում հիմնավորվում է, որ սովորողների հետազոտական գործունեությունը ունի կրթադաստիարակչական, զարգացնող մեծ ներուժ, քանի որ նպաստում է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը, անձնական նշանակություն ունեցող հետազոտական փորձի ձեռքբերմանը, ճանաչողական ակտիվության, հետևողականության, նպատակասլացության, ինքնազարգացման և ինքնագնահատման որակների և վարքագծի նորմերի ձևավորմանը:

Հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներից, գաղափարներից, տեսական դրույթներից շատերը մեթոդական խորություն չունեն և չեն բացահայտում նախագծերի մեթոդի կիրառման եղանակների առանձնահատկությունները:

Ելնելով վերոբերյալից՝ սահմանվել է «հետազոտական կարողություններ» հասկացությունը. **կարողությունները նախագծեր պլանավորելու և իրականացնելու, հետազոտական առաջադրանքներ կատարելու սովորողի ունակությունն է, որը դրսևորվում է կոնկրետ նախագծային, հետազոտական գործունեության կատարման ընթացքում՝ որպես նրա ուսումնական գործունեության արդյունքում յուրացված գիտելիքները հետազոտական գիտակցված գործողության մեջ դնելու արդյունք:**

Ներկայացված են մեր կողմից առանձնացված հանրակրթական դպրոցի քիմիայի դասընթացում սովորողների հետազոտական կարողությունների զարգացման միմյանց տրամաբանական հաջորդականություն կազմող փուլերը:

Երկրորդ ենթագլխում՝ «Քիմիայի ուսուցման գործընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման տեսական-մոտեցումների վերլուծությունը», անդրադարձել ենք քիմիայի ուսուցման գործընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման տեսական-մոտեցումների վերլուծությանը: Բնութագրվել են «**նախագծային մշակույթ**» և «**նախագծային ստեղծագործական մտածողություն**» հասկացությունները: Բնութագրվել է նաև «ուսումնական նախագիծ» հասկացության էությունը:

Ներկայացված է քիմիայի ուսուցման ընթացքում նախագծերի մեթոդի կիրառման վերաբերյալ ուսուցիչների հարցման արդյունքները, որոնք ցույց են տվել, որ դեռևս նրանցից շատերը մեթոդական լիարժեք պատրաստվածություն չունեն և չեն տիրապետում նախագծերի մեթոդի կիրառման եղանակներին, ուստի դրա արդյունավետության մասին չեն կարող որևէ մասնագիտական կարծիք հայտնել:

Ներկայացվել և բնութագրվել են նախագծերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվող ընդհանուր ուսումնական կարողություններն ու հմտությունները:

Երրորդ ենթագլխում՝ «Նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման առանձնահատկություններն ու սկզբունքները», բնութագրվել է նախագծերի մեթոդի և նախագծային տեխնոլոգիայի էությունը, **նախագծերի դասակարգման տեսակները, իրականացման փուլերը:**

Հետազոտությամբ բացահայտված և բնութագրված են քիմիայի ուսուցման գործընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման առանձնահատկություններն ու սկզբունքները:

Ներկայացված է քիմիայի ուսուցման գործընթացում սովորողների ինքնուրույնության, հետազոտական կարողությունների զարգացման մեթոդական համակարգի կառուցվածքը, որը ներառում է ուսումնական աշխատանքների կազմակերպման ձևերի, միջոցների, մեթոդների և տեխնոլոգիաների, հետազոտական առաջադրանքների, նախագծերի, չափանիշների, ցուցանիշների և ստացված արդյունքների համախումբը:

Ատենախոսության երկրորդ՝ «Սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մեթոդական-տեխնոլոգիական մոդելի բնութագրումը եվ նրա փորձարարական հիմնավորումը» խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Քիմիայի ուսուցման գործընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների նախագծային մտածողության և հետազոտական կարողությունների զարգացման բնութագիրը», հիմնավորվում է հետազոտությամբ բացահայտված մեր այն գիտական կարծիքը, որ նախագծերի մեթոդի կիրառմամբ հետազոտական գործունեության, ուսումնական նախագծերի իրականացման ընթացքում զարգանում են սովորողների քիմիական, նախագծային, քննադատական մտածողությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, հետազոտական,

համագործակցային, վերլուծելու, ինքնագնահատման, փոխադարձ գնահատման կարողությունները: Դրան զուգահեռ ձևավորվում է քիմիական տարրերի, քիմիկատների օգտագործման նկատմամբ զգուշավոր վերաբերմունք:

Ներկայացված են քիմիայի դասընթացում մեր կողմից սահմանված սովորողների նախագծային մտածողության և **հետազոտական կարողությունների** զարգացվածության չափանիշները, որոնք հիմք հանդիսացան սովորողների հետազոտական կարողությունների կառուցվածքային բաղադրիչների որոշարկման համար:

Նախագծային մտածողության չափանիշներն են՝

- քիմիայից գիտելիքների ծավալը,
- քիմիական հավասարումների, նախագծերի բովանդակության ընկալման աստիճանը,
- նախագծի, հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծության և համադրման կարողությունը,
- իմացական հետաքրքրությունների ձևավորվածության աստիճանը,
- ստեղծագործական երևակայության դրսևորման աստիճանը:

Սովորողների հետազոտական կարողությունների զարգացվածության չափանիշները.

- կարողանում է լուսաբանել հետազոտական խնդիրը կամ նախագիծը որպես մեկ ամբողջություն,
- կարողանում է առաջադրել հետազոտական խնդիր կամ նախագծի թեմա,
- կարողանում է առաջադրել և հիմնավորել վարկածներ,
- կարողանում է առաջադրել հետազոտական խնդրի լուծման կամ նախագծի իրականացման մեթոդներ,
- կարողանում է պլանավորել հետազոտական աշխատանքները, նախագծի իրականացման փուլերը,
- կարողանում է գտնել հետազոտական խնդրի օպտիմալ լուծման տարբերակներ,
- կարողանում է գործնական դասերի ընթացքում ստուգել հետազոտության վերաբերյալ տեղեկատվության ճշգրտությունը,
- կարողանում է ուսուցչի ուղղորդմամբ կամ ինքնուրույն իրականացնել նախագիծը կամ հետազոտական աշխատանքը,
- կարողանում է վերլուծել, գնահատել և ներկայացնել արդյունքները:

Վերը նշված չափանիշները հիմք հանդիսացան սովորողների հետազոտական կարողությունների կառուցվածքային բաղադրիչների որոշարկման համար, որոնք հետևյալն են.

Կազմակերպչական.

- բազմակողմանի դիտումներ անելու կարողություն,
- քիմիայից փորձ կատարելու կարողություն,
- հետազոտական առաջադրանքի կամ նախագծի թեմայի առաջադրում և կատարման նպատակի սահմանում,
- վարկածների առաջադրում,
- պատճառահետևանքային կապերի որոշարկում,
- հետազոտական գործունեության կամ նախագծի իրականացման պլանավորում և մեթոդների ընտրություն,
- հետազոտության կամ նախագծի իրականացում,
- հետազոտության արդյունքների ներկայացում,
- կատարված հետազոտական աշխատանքի կամ նախագծի ինքնագնահատում:

Տեղեկատվական.

- դիտումներ, զրույց, հարցազրույց, թեստավորում,
- տարբեր տպագիր աղբյուրների օգտագործում,
- զանգվածային տեղեկատվության միջոցների օգտագործում (հեռուստատեսություն, համակարգիչ և համակարգչային ծրագրեր, համացանց, բջջային կապ):

Տեխնիկական.

- աշխատանք տարբեր լաբորատոր և տեխնիկական սարքերի, համակարգչային ծրագրերի հետ:

Վերլուծություն և համեմատություն.

- հետազոտության արդյունքների վերլուծություն, համադրում և անալոգիայի օգտագործում,

- վերացարկում և ընդհանրացում,
- մոդելավորում,
- համակարգում,
- պատճառահետևանքային կապերի որոշարկում,
- վարկածների առաջադրում

Վերոբերյալը թույլ է տալիս փաստել, որ քիմիայի ուսուցման գործընթացում ձեռք բերված հետազոտական կարողությունները որոշակի բաղադրիչների համակարգ է, որը կառավարվում է ուսուցչի կողմից: Այդ գործողությունների կոմպետենտ կատարումը վեր է ածվում կարողությունների:

Նշվում է, որ հանրակրթական դպրոցներում քիմիայի դասերի շրջանակներում իրականացված փորձարարական աշխատանքների ընթացքում, բացի նախագծերի մեթոդից, համամասնաբար կիրառվել են նաև բազմաթիվ այլ փոխներգործուն մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք էականորեն նպաստել են նախագծերի մեթոդի արդյունավետ կիրառմանը և սովորողների հետազոտական կարողությունների զարգացմանը: Դրանցից մի քանիսը ներկայացված են հետազոտության մեջ կիրառական օրինակների և մեթոդական հանձնարարականների տեսքով:


Երկրորդ ենթագլխում՝ «Նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մոդելի փորձարարական հիմնավորումը», դիտարկված են քիմիայի ուսուցման գործընթացում սովորողների ուսումնական դրդապատճառների խթանման հարցը, ներկայացված են այդ ուղղությամբ իրականացված հետազոտության արդյունքները:

Ստացված արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս ոչ միայն արձանագրել տարբերությունները փորձարարական և ստուգիչ խմբերի միջև, այլև անցնել դրանց պատճառահետևանքային մեկնաբանությանը: Մասնավորապես, անհրաժեշտ է բացահայտել, թե որ մանկավարժական մոտեցումներն ու կազմակերպչական պայմաններն են նպաստել նշված դրական տեղաշարժերին և ինչպես են դրանք ազդել սովորողների մոտիվացիոն և հուզական ոլորտների վրա: Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ կիրառված մեթոդների և տեխնոլոգիաների բովանդակային և գործնական առանձնահատկություններին, որոնք պայմանավորել են ներկայացված արդյունքները:

Ներկայացված են փորձարարության ընթացքում սովորողների կողմից իրականացված նախագծային աշխատանքների նմուշօրինակները ուսուցման տարբեր փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ:


Նշվում է, որ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մեթոդաբանական-հայեցակարգային մոտեցումներն ու փորձարարական հետազոտության արդյունքները հիմք են հանդիսացել մշակելու և փորձարարությամբ հիմնավորելու քիմիայի դասընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մեթոդական-տեխնոլոգիական մոդելը (գծապատկեր1):

Քիմիայի ուսուցման գործընթացում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման մեթոդական-տեխնոլոգիական մոդելը



Փորձարարության ընթացքում հաշվի են առնվել նախագծերի մեթոդի կիրառման ուսումնական հնարավորությունները՝ հիմնական և ավագ դպրոցների 7-11-րդ դասարաններում՝ ըստ դասագործընթացի խնդիրների (գծապատկեր2) :

Նախագծերի մեթոդի կիրառման ուսումնական հնարավորությունները հիմնական և ավագ դպրոցների 7-11-րդ դասարաններում



Ներկայացված և բնութագրված են փորձարարական հետազոտության փուլերը, յուրաքանչյուր փուլում իրականացվող նպատակը, լուծվող խնդիրներն ու կիրառվող մեթոդները:

Երրորդ ենթագլխում՝ «Փորձարարական հետազոտության արդյունքների մշակումն ու վերլուծությունը», դիտարկված են նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված հետազոտական առաջադրանքների դասակարգման վերաբերյալ առկա մոտեցումները, տեսակները և չափանիշները:

Հետազոտական-նախագծային աշխատանքների կատարման որակի ստուգման և գնահատման ընթացքում բացահայտվել և որոշակիացվել են նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների քիմիական գիտելիքների յուրացման և հետազոտական կարողությունների զարգացման մակարդակի բարձրացման շարժընթացը (դինամիկան):


Ներկայացված են **փորձարարական աշխատանքի հիմնական խնդիրները՝**

- ուսումնասիրել նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման շարժընթացը քիմիայի ուսուցման գործընթացում,
- սահմանել և հաշվի առնել նախագծերի մեթոդի կիրառման ուսումնական հնարավորությունները հիմնական և ավագ դպրոցների 7-11-րդ դասարաններում,
- գործարկել հանրակրթական դպրոցում նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման արդյունավետության ապահովման առաջարկվող մոդելը, որը գիտագործնական օգնություն կլինի հանրակրթական դպրոցում քիմիա դասավանդող ուսուցիչների համար:

Փորձարարական աշխատանքներին մասնակցել են Երևանի թիվ 118, 155, 168 դպրոցների շուրջ 30 ուսուցիչ և 174 հանրակրթական դպրոցի սովորող: Փորձարարությունը անցկացվել է երեք փուլով, որոնցից յուրաքանչյուրի իրացումը ծառայեցվել է հետազոտության նպատակի իրականացմանը, ուստի և կրել են փոխկապակցված բնույթ:

Ստորև ներկայացված են սովորողներին ուղղված **առաջին հարցման արդյունքները** փորձարարության սկզբում և վերջում (աղյուսակ 1, տրամագիր 1):

Հարցերը ըստ հերթականության	Ստուգիչ%	Փորձական%
1. Հաճախ ես մասնակցում նախագծային-հետազոտական աշխատանքների	33.3	74.1
2. Կարողանում ես պլանավորել հետազոտական գործունեությունը	35.1	70.1
3. Դժվար իրավիճակներում արագ կողմնորոշվում եք և կարողանում եք տեսակետ արտահայտել	36.2	73.6
4. Ձգտում եք կատարել այնպիսի հետազոտական աշխատանք, որտեղ կդրսևորվեն երևակայություն, հնարամտություն	32.8	75.9
5. Կարողանում եք հետազոտական աշխատանքի ընթացքում համագործակցել ընկերների հետ	37.4	77.6
6. Կարողանում եք օբյեկտիվորեն գնահատել ձեր կատարած հետազոտական աշխատանքը	39.1	78.2
7. Կարողանում եք տարբերել հետազոտական նյութի գլխավոր հատկանիշները	29.3	75.3
8. Կարողանում եք կատարել համեմատություններ և հիմնավորել ձեր տեսակետը	38.5	77
9. Նախագծերի մեթոդի կիրառումը նպաստում է գիտելիքների հարստացմանը	25.9	88.5



Տրամադիր 1. Սովորողների ուղղված հարցման համեմատական արդյունքները փորձարարության սկզբում և վերջում:

Բերված աղյուսակներում և տրամագրերում արտացոլված թվերը լիովին և համոզիչ կերպով հաստատում են նախագծերի մեթոդի կիրառմամբ սովորողների հետազոտական կարողությունների զարգացման շարժընթացը (դինամիկան) ցածրից դեպի բարձրը:

Ներկայացված նախագծերի և հետազոտական աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս այն դրական ներգործությունը, որ ունեցել է **նախագծերի մեթոդի կիրառումը քիմիայի ուսուցման գործընթացում**:

Այսպիսով նախագծերի մեթոդի կիրառումը քիմիայի ուսուցման ընթացքում թույլ է տվել զարգացնել սովորողների հետազոտական կարողությունները՝ համադրելով ուսուցման փոխներգործուն մեթոդներ, թվային և հաղորդակցական տեխնոլոգիաներ:

Այսինքն՝ մեր ուսումնասիրությունների ընթացքում բացահայտվել է, որ նախագծերի մեթոդի կիրառումը չի բացառում նաև ուսուցման այլ փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների համաժամանակյա կիրառումը, որոնք դասագործընթացի որոշակի փուլում կամ ստեղծված պրոբլեմային իրավիճակներում նպաստում են նախագծերի մեթոդի արդյունավետ կիրառմանը:

Հարցմանը մասնակցած ուսուցիչների կարծիքով նախագծային աշխատանքները նպաստում են դասարանի բոլոր սովորողների ակտիվ մասնակցությանը, ուշադրության կենտրոնացմանը դասի ընթացքում և կրճատում տնային աշխատանքների վրա ծախսվող ժամանակը: Նրանք գտնում են, որ իրենց կառուցվածքով նախագծային-հետազոտական աշխատանքները սովորողների համար հետաքրքիր և դյուրընկալելի են, և, ի տարբերություն սովորական դասագործընթացի, բոլոր սովորողներն են ներգրավվում այդ աշխատանքներում, ուստի նախագծերի մեթոդի կիրառումն առանձնակիորեն ակտիվացնում և մոտիվացնում է բոլորին:


Ներկայացված և բնութագրված են փորձարարական հետազոտության փուլերը, յուրաքանչյուր փուլում իրացվող նպատակը, լուծվող խնդիրներն ու կիրառվող մեթոդները:

Հաջորդ երկրորդ հարցումը նպատակ ուներ հասկանալու սովորողների առարկայական կողմնորոշումը՝ մասնագիտական կրթության ոլորտում որակյալ կադրային քաղաքականություն որոշելու նպատակով:

Ընտրեք ձեզ ամենաշատ հետաքրքրող ուսումնական ոլորտը.

1. Սոցիալ-տնտեսական (պատմություն, հասարակագիտություն, իրավունք, տնտեսագիտություն):
2. Բանասիրական (հայոց և օտար լեզուներ, գրականություն):
3. Բնական գիտություններ և մաթեմատիկա (մաթեմատիկա, համակարգչային գիտություն, քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա, աշխարհագրություն):
4. Արվեստ, երգ երաժշտություն:

Արդյունքներից պարզ դարձավ, որ սովորողներն առավել հետաքրքրված են սոցիալ-տնտեսական ոլորտի առարկաներով՝ սովորողների 42 %-ը: Մոտավորապես հավասար թվով սովորողներ էլ ընտրել են 2-րդ և 3-րդ պատասխանները՝ համապատասխանաբար 26% և 28%, Չորրորդ հարցն ընտրել են սովորողների ընդամենը 4 տոկոսը (Տրամագիր 3.):



Տրամագիր 2.Սովորողներին հետաքրքրող ուսումնական ոլորտները(%):


Աղյուսակ 2

№	Ընտրեք ձեզ ամենաշատ հետաքրքրող ուսումնական ոլորտը	
1	Սոցիալ-տնտեսական (պատմություն, հասարակագիտություն, իրավունք, տնտեսագիտություն)	42%
2	Բանասիրական (հայոց և օտար լեզուներ, գրականություն)	26%
3	Բնական գիտություններ և մաթեմատիկա (մաթեմատիկա, քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն)	28%
4	Արվեստ, երգ-երաժշտություն	4%

Աղյուսակ 3. Ծրագրում ընդգրկված և նախագծային գործունեություն իրականացնող սովորողների կարողությունները սկզբում և վերջում

	2019թ. սեպտեմբեր		2022թ. դեկտեմբեր	
	գիտեմ 1 (%)	Կարողեմ 1 (%)	Գիտեմ 2 (%)	Կարողեմ 2 (%)
Կարողություններ				
1. Կարող եք ընտրել հետազոտական թեմա և հիմնավորել ընտրությունը	15	6	48	39
2. Կարող եք վարկած առաջադրել	2	1	43	32
3. Կարող եք նպատակ դնել և հասնել դրան	10	8	49	32
4. Ես գիտեմ, թե ինչպես պլանավորել իմ գործունեությունը:	6	4	75	62
5. Կարող եք փորձ պլանավորել լաբորատորիայում կատարելու համար	10	8	67	77
6. Կարող եք կատարել համակարգչային աշխատանքներ	45	25	78	88
7. Կարող եք կատարելու ինքնուրույն աշխատանքներ	10	10	67	67
8. Ես կարող եմ եզրակացություններ և առաջարկություններ ևակերպել հետազոտական աշխատանքն ավարտելուց հետո	8	7	38	77
9. Ես գիտեմ, թե ինչպես հանրության առջև ելույթ ունենալ:	15	10	25	89

Հարցման արդյունքները ներկայացված են տրամագիր 3-ում.



Տրամագիր 3. Ծրագրում ընդգրկված և նախագծային գործունեություն իրականացնող սովորողների կարողությունները սկզբում և վերջում

Հարցման տվյալների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները: 2019 թվականի սեպտեմբերին ծրագրում ընդգրկված սովորողներն ունեին թույլ հետազոտական հմտություններ և կարողություններ, ինչի մասին վկայում են գրեթե բոլոր հարցման ցուցանիշների ցածր միավորները: Հարցումն անցկացվել է անանուն, ուստի սխալի տոկոսը ցածր է: Իհարկե, պետք է հաշվի առնել նաև սովորողների տարիքը: Այնուամենայնիվ, նույնիսկ նրանց տարիքը հաշվի առնելով՝ պարզ է, որ սկզբում սովորողների շատ փոքր տոկոսն է թեկուզ մի փոքր վստահություն զգում հետազոտությունների նկատմամբ: 2022 թվականի վերջին ստացված արդյունքները խրախուսական են: Սովորողների ինքնագիտակցության այդքան զգալի աճի վրա դրական ազդեցություն ունեն նաև բազմաթիվ այլ դրդապատճառներ :

